ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2019թ. հունվար- փետրվար

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019 թվականի հունվար-փետրվարին ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

- 2019 թվականի հունվար-փետրվարին ՏԱՑ-ը կազմել է 106.5%:
- Արդյունաբերության թողարկումն աճել է 1.9%-ով, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 8.4% աճի դիմաց: Բացասական նպաստում են ունեցել հանքագործական արդյունաբերությունը՝ -1.5 տոկոսային կետ և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ենթաճյուղը՝ -1.3 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության նպաստը կազմել է 3.2 տոկոսային կետ, իսկ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ 0.02 տոկոսային կետ:
- Շինարարության աճը կազմել է 21.6%՝ նախորդ տարվա 22.7%-ի դիմաց: Ըստ ֆինանսավորման աղբյուրների 75.9% աճել է պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարությունը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալն աճել է 2.4 անգամ: Բնակչության միջոցների հաշվին՝ աճը 19.6%, իսկ կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության գծով՝ 4.0%: Համայնքների միջոցներով իրականացված շինարարության ծավալը նվազել է -18.3%-ով: Կառուցվածքում գերակշռել է կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարությունը՝ 52.4%, որին, ըստ տեսակարար կշռի նվազման, հաջորդել են պետական բյուջե՝ 30.6% և բնակչության միջոցներ՝ 15.8%: Միջազգային վարկերը կազմել են բյուջեի ֆինանսավորման ծավալի 85.7%-ը:
- Ծառայությունների ոլորտում արձանագրվել է 17.5% աճ: Ծառայության բոլոր տեսակների նպաստը դրական է եղել: Ծառայությունների աճին առավելագույն՝ 8.7 տոկոսային կետով նպաստել է մշակույթ, զվարճություններ և հանգիստ տեսակը, որին ըստ նպաստման նվազման հաջորդում են ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 4.9 տոկոսային կետ, կացության և հանրային սննդի կազմակերպումը՝ 1.5: Ծառայության մյուս տեսակների գումարային դրական նպաստումը կազմել է 2.4 տոկոսային կետ:









Ծառայությունների տեսակները	Աճ, %	Կառուցվածք %	Նպաստ, %-ային կետ
Ընդամենը	17.5	100	-
մշակույթ, զվարճություններ և հանգիստ	41.6	25.3	8.7
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	21.4	23.7	4.9
կացության և հանրային սննդի կազմակերպում	25.2	6.1	1.5
տեղեկատվություն և կապ	5.2	14.3	0.8
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	13.9	4.4	0.6
վարչարարական և օժանդակ գործունեություն	10.1	3.7	0.4
կրթություն	8.1	3.4	0.3
մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	3.4	3.3	0.1
տրանսպորտ	0.9	10.9	0.1
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1.1	3.4	0.04
սպասարկման այլ ծառայություններ	1.1	1.5	0.02

- Առևտրի շրջանառության աճը կազմել է 13.1%: Մանրածախ առևտրի շրջանառության աճը կազմել է 8.6%, մեծածախ առևտրինը՝ 20.0%, իսկ ավտոմեքենաների առևտրինը նվազել է -9.3%-ով:

  Ըստ առևտրի օբյեկտների տեսակարար կշռի նվազման մանրածախ առևտրի աճ է գրանցվել խանութների գծով՝ 9.6%, առևտրի այլ օբյեկտների՝ 14.0%, կրպակների՝ 17.0%: Նվազում է գրանցվել սպառողական ապրանքների շուկաների գծով՝ -9.3% և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներիգծով՝ -37.5%:

Առևտրի շրջանառության ծավալ, հունվար-փետրվար, մլրդ դրամ



Գնաճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա ցուցանիշից

- 2019 թվականի հունվար-փետրվարին սպառողական գների ինդեքսը կազմել է 101.3%, նախորդ տարվա 103.1%-ի դիմաց:

  Ըստ առանձին ապրանքների և ծառայությունների առավելագույն գնաճ գրանցվել է հանգիստ և մշակույթ ծառայության գծով՝ 101.8%, ալկոհոլային խմիչք, առողջապահություն՝ 100.8%, ռեստորաններ և հյուրանոցներ՝ 100.5%, ծխախոտային արտադրատեսակներ՝ 100.4%: Գնաճ չի գրանցվել կապի և կրթության ծառայությունների գծով:

  Գների նվազում է գրանցվել ծառայությունների հետևյալ տեսակներում՝ տրանսպորտ՝ ինդեքսը 99.5%, հագուստ և կոշիկ՝ 96.0%:

- Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը կազմել է 99.0%, նախորդ տարվա 104.4%-ի դիմաց:

Սպառողական գների ինդեքս, հունվար-փետրվար, %



Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս հունվար- փետրվար, %



2018 թվականի աճի դիմաց 2019 թվականի հունվարին-փետրվարին արտաքին առևտրաշրջանառության, այդ թվում և արտահանման և ներմուծման գծով գրանցվել է բացասական ցուցանիշ:

- Արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 1011.9 մլն ԱՄՆ դոլար՝ նվազումը -7.7%:

- Արտահանումը կազմել է 337.9 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ -11.6%:

- Ըստ երկրների խմբերի արտահանման նվազում է գրանցվել բոլոր երեք ուղղություններով: Դեպի ԵՄ երկրներ արտահանումը նվազել է՝ -30.8%-ով, ԱՊՀ երկրներ՝ -2.6%-ով, այլ երկրներ խումբ՝ -3.8%-ով: ԵԱՏՄ երկրներ արտահանումը նվազել է՝ -4.3%-ով:

Արտահանման ծավալի աճ, հունվար-փետրվար, %



Ներմուծման ծավալի աճ, հունվար-փետրվար, %



- Ըստ ՏԳՏ արտահանման 2-նիշ դասակարգման 20 ապրանքախմբերից աճ է գրանցվել միայն 6-ի գծով՝ (գումարային տեսակարար կշիռը 33.2%), նպաստումը՝ 2.7 տոկոսային կետ: Առավել բարձր աճ է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով՝ պատրաստի սննդի արտադրանք (ներառյալ ծխախոտ)՝ 6.8%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 40.1%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 63.4%, բուսական ծագման արտադրանք՝ 0.4%, իրեր քարից, գիպսից ցեմենտից՝ 29.4%, սարքեր և ապարատներ՝ 31.8%:

- Ներմուծումը կազմել է 674.0 մլն ԱՄՆ դոլար, նվազումը՝ -5.6%:

- Ըստ երկրների խմբերի նույնպես բոլոր երեք ուղղություններով նվազում է գրանցվել: ԵՄ երկրներից ներմուծումը նվազել է -16.6%-ով, ԱՊՀ երկրներից՝ -3.8%-ով, այլ երկրներ խմբից՝ -0.9%-ով: ԵԱՏՄ երկրներ արտահանումը նվազել է՝ -4.1%-ով:

- Ըստ ՏԳՏ ներմուծման 2-նիշ դասակարգման 20 ապրանքախմբերից աճ է գրանցվել 11 ապրանքախմբում:

  Ըստ տեսակարար կշռի նվազման ապրանքախմբերից ներմուծման աճ է գրանցվել հետևյալների գծով՝ հանքահումքային արտադրանք՝ 4.9%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 21.2%, մանածագործական իրեր՝ 7.6%, թուղթ և թղթից իրեր՝ 28.0%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 21.3%, փայտ և փայտյա իրեր՝ 17.9% և կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 18.0%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 9.2%, բուսական ծագման արտադրանք՝ 12.2% պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ 1.9%, մանածագործական իրեր՝ 7.6%

	Արտահանման նվազում, %
փայտ և փայտյա իրեր	-56.8
արվեստի ստեղծագործություններ	-55.5
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	-53.8
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	-48.9
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	-37.1
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	-34.2
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-32.1
թուղթ և թղթից իրեր	-21.1
հանքահումքային արտադրանք	-18.0
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	-14.7
մանածագործական իրեր	-11.2
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	-6.5
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-0.4

	Ներմուծման նվազում, %
սարքեր և ապարատներ	-52.0
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	-41.1
պատրաստի սննդի արտադրանք	-25.8
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-12.8
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	-8.6
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-8.0
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	-7.4
տարբեր արդյունաբերական ապրանքներ	-3.3

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվար-փետրվարին արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 1.9%-ով: Հիմնական ճյուղերից աճ է գրանցվել միայն մշակող արդյունաբերությունում:

- **Հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղում թողարկումը նվազել է -7.3%-ով, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ճյուղում՝ -1.3%-ով, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ճյուղում՝ -7.0%-ով, իսկ մշակող արդյունաբերությունում գրանցվել է 8.0% աճ:**
- **Մշակող արդյունաբերության ենթաճյուղերից արդյունաբերության աճին (ըստ տեսակարար կշռի նվազման) առավել մեծ դրական նպաստ են ունեցել սննդամթերքի արտադրությունը (աճը՝ 9.7%), ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը (աճը՝ 11.3%), խմիչքների արտադրությունը (աճը՝ 23.7%), որոնց գումարային նպաստումը արդյունաբերության աճին կազմել է 4.4 տոկոսային կետ: Աճ գրանցած բոլոր ենթաճյուղերի գումարային նպաստումն արդյունաբերության աճին կազմել է 6.6 տոկոսային կետ:**
- **Ըստ ՏԳԴ 2-նիշ դասակարգման մշակող արդյունաբերության 23 ենթաճյուղերից 4-ում գրանցվել է նվազում՝ (արդյունաբերության աճի գումարային զսպումը՝ -1.9 տոկոսային կետ):**

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ
նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %



Մշակող արդյունաբերության ծավալի աճ,
նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %



Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի նպաստումը արդյունաբերության աճին,
2019թ. հունվար-փետրվարին, տոկոսային կետ



Արդյունաբերության արտահանում նվազել է: Նվազում է գրանցվել թե հանքագործական արդյունաբերության և թե մշակող արդյունաբերության գծով: Մշակող արդյունաբերության որոշ ճյուղերի գծով գրանցվել է արտահանման աճ:

- Արդյունաբերական արտադրանքի արտահանումն ընթացիկ գներով նվազել է 13.1%-ով, դեպի ԱՊՀ երկրներ արտահանման աճը կազմել է 26.3%, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ՝ 29.1 %-ով իսկ դեպի ԱՅԼ երկրներ նվազել է 16.3%-ով:

- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ճյուղի արտադրանքի արտահանումը նվազել է 9.9%-ով, դեպի ԱՊՀ երկրներ աճել է 1.5 անգամ, այդ թվում ԵԱՏՄ երկրներ՝ 1.9 անգամ, իսկ դեպի այլ երկրներ՝ նվազել է 10.5%-ով (տեսակարար կշիռը՝ 95.9%):

- Մշակող արդյունաբերության արտահանումը նվազել է 1.2%-ով: Մշակող արդյունաբերության արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ աճել է 25.3%-ով, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ՝ 27.9%, իսկ դեպի ԱՅԼ երկրներ՝ նվազել 11.3%-ով:

Մշակող արդյունաբերության կառուցվածքում բարձր տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերի արտադրանքի արտահանման աճ, %

	Աճ, %	Տեսակարար կշիռ, %
Հիմնային մետաղների արտադրություն	-17.7	31.8
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	-10.6	24.0
Խմիչքների արտադրություն	35.0	20.5
Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	11.9	11.1
Սննդամթերքի արտադրություն	34.1	5.9